



## 5. ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿԻՆ

Մարդ ու կնիկ են ըլնում: Մարդը շատ 'նախապաշարված է լինում ու բոլորովին չի հեռանում կնկա մոտից, սաղ տարիներով տանը նստում էր ու չէր գնում աշխատելու, կարծելով թե կինը կարող է անառակութուն անել: Մի անգամ կինը ասեց մարդին, որ լավ կանի գնա աշխատելու, ինքը խոստանում է, որ անառակութուն չի անի:

Մարդը լսեց կնկա խոսքին ու գնաց ուրիշ երկիր աշխատելու: Կնիկը տունը միշտ կողպած էր պահում: Մի երեկո տեսավ, որ մի աղքատ դրսեից բաց արեց նրա դուռը և խնդրեց իջևանելու: Նա սկզբում մերժեց՝ ասելով, որ իր մարդը հրամայել է ոչ ոքի չընդունել, բայց հետո խղճաց նրա վրա ու ընդունեց յուր տունը: Երեկոյան իրիկնահաց բերեց, ինչ որ տանը ունեւր, իրար հետ հաց կերան ու քնեցին: Այն աղքատի համար առանձին տեղ քցեց, իր համար առանձին ու քնեցին: Առավոտը վեր կացավ կնիկը ու տեսավ աղքատը տանը չէ, նա մնաց զարմացած: Նստեց յուր սենյակը և տեսավ, որ ամեն կողմը լիքն է փողերով: Նա հետո դիտի ընկավ որ այդ ծերունին աստվածն էր, որ եկել էր իրեն փորձելու: Նա սրանից հետո էլ առաջվա աղքատը չէր, մեծ հարստության

«Անր դարձավ ու մի քանի ժառանգորդ էր ապրում: Մի քանի տարուց հետո կկամ նորա մարդը, տեսավ թե ինչպես է հարստացել. սկսեց կասկածել, թե երևի նա տնտեսակութեամբ է ժողովել այս բոլորը ու մի անգամ իրանց բարեկամի մոտ դնալիս, որ մերձակա գյուղում էր լինում, նրան սպանեց: Նորա գերեզմանի վրա աստծո օրհնանով լույս վայր եկավ: Մի անգամ թաքավորի տղեն յուր երկու ծառաներով կկամ այս տեղերը որսի, նկատեց այս լույսը ու յուր ծոցից հանելով մի տեսակ գեղ ցանեց այդ լույսի վրա ու կենդանացավ:

Թաքավորի տղեն տեսնելով նրա գեղեցկությունը, ասեց.

— Ես քեզ մարդ, դու ինձ կնիկ:

Նա ասաց.

— Չէ՛, դու ինձ որդի, ես քեզ մայր:

Թաքավորի տղեն բարկացավ սրա վրա ու հրամայեց ծառաներին տանել հեռու սպանել: Ծառաները կատարեցին նրա հրամանը՝ տարան փոքր ինչ հեռու, բայց խղճացին ու շսպանեցին նրան: Նրան բաց թողին, գնաց:

Դնաց, գնաց՝ մի հարուստ վաճառական պատահեց ու նրան ասեց.

— Ես քեզ մարդ, դու ինձ կնիկ:

Նա շհամաձայնվեց ու ասեց.

— Ես քեզ քույր, դու ինձ եղբայր:

Հարուստ վաճառականը բարկացավ նրա վրա ու ուղղակի ծովը գցեց, որ այգտեղից շատ հեռու չէր: Այն ծովի մեջտեղ մի կղզի կար, ուր մի աղքատ մարդ յուր քրոջ և հինգ աղջկերանցով ապրում էր, ամենահտին աղքատության մեջ: Ծովից ձուկ էր բռնում ու նրանց պահում, Մի օր էլ թողը գցեց ու տեսավ, որ ծանր է գալիս թողը, քաշեց ու տեսավ մի սիրուն կնիկ, փառք տվեց աստծուն. «Աստված է այս տվել, երևի սրա համար էլ կերակուր ես կհասցնի»: Այս կինը սրանց տանը ապրում էր, որպես մայր բոլորի ու յուր հարստութեամբ կառավարում ողջ ընտանիքը: Նա այս հինգ աղջիկներին ամենահայտնի մարդկերանց վրա պսակեց, որ ով դիտե, ինքը չլիներ, պիտի տանը մնային: Հետո հրամայեց այս ձկնորսներին, որ յուրյանց տներն ու յուր փողով այնպիսի սենյակներ ջինի, որ մի քանի խալվար ցորեն տանի: Ու երբ տեսավ սենյակները պատրաստ են, այնքան ցորեն առավ ու լցրեց այն տեղերը:

էնպես որ սաղ աշխարհը սով ընկավ: Այդ ժամանակ նա ամեն տեղ տարածեց, որ անփոխ ամենքին ցորյան է տալիս: Աշխարհի ամեն ծայրերից դալիս էին նրանից ցորեն առնելու, տանելու: Նրանց մեջ էին և յուր մարդը, այն թաքավորի տղեն և երկու ծառաները և էն հարուստ վաճառականը: Այս կինը նրանց ճանաչեց ու ձկնորսին ասեց, որ ցորեն ամենքին տան, իսկ նրանց շտան: Այդպես էլ արեց, բոլորին բաժանեց, իսկ նրանք բոլորը մնացին վերջը: Նա ասեց, որ լավ ճաշ պատրաստեն ու նրանց յուր մոտ կանչեն, իրար հետ ճաշելու: Իհարկե նրանք չէին ճանաչում, թե այս կինը ո՞վ է: Ծառի ժամանակ նա առաջարկեց, որ նրանք իրար հեքիաթ պատմեն. նրանք մերժեցին նրա խնդիրը, ասելով, որ իրանք հեքիաթ չգիտեն: Այն ժամանակ յուր ծառային այս կինը հրամայեց բերել յուր մոտ յուր թուրը ու նա դրեց սեղանի վրա, բայց ասեց հյուրերին.

— Ես այժմ հեքիաթ կասեմ, միայն ոչ ոք դուրս չդա մինչև նրա վերջը, թե չէ նրա գլուխը կկտրեմ:

Նրանք խոստացան մինչև վերջը լսել. այս կինը սկսեց այս հեքիաթը, որ քեզ պատմեցի, ընթերցող, պատմեց մինչև այդտեղը: Այն ժամանակ նրանք կծեցին իրանց մատները, բայց չէին կարող դուրս գնալ, որովհետև կարող էր սպանել: Հեքիաթը վերջացնելուց հետո, նա թուրը քաշեց թաքավորի տղին, հարուստ վաճառականին սպանեց, թաքավորի տղի երկու ծառաներին բաշխեց, իսկ յուր մարդի հետ էլ առաջվա նման սիրով ապրեց:

